

**«Գրանցված է»**  
ՀՀ արդարադատության  
նախարարության կողմից  
24 հոկտեմբերի 2000 թ.

*Պետական գրանցման թիվ 11200121*

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ**

**ՆԵՐՔԻՆ ԳՈՐԾԵՐԻ ՆԱԽԱՐԱՐ**

**Հ Ր Ա Մ Ա Ն**

27 սեպտեմբերի 2000 թվականի թիվ 382

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆՈՒՄ ԿԱՑՈՒԹՅԱՆ ՀԱՏՈՒԿ ԱՆՁՆԱԳՐԵՐԻ  
ՀԱՇՎԱՌՄԱՆ ԿԱՐԳԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ**

«Հայաստանի Հանրապետությունում կացության հատուկ կարգավիճակ ստանալու վերաբերյալ նյութերը ՀՀ Նախագահին ներկայացնելու կարգը նոր խմբագրությամբ հաստատելու մասին» ՀՀ նախագահի 12.07.2000թ. թիվ ՆՀ-630 հրամանագրով հաստատված կարգի 5-րդ կետի կատարումն ապահովելու նպատակով

***Հրամայում եմ***

1. Հաստատել Հայաստանի Հանրապետությունում կացության հատուկ անձնագրերի հաշվառման կարգը (կցվում է):
2. Սույն հրամանով հաստատված կարգը ներկայացնել ՀՀ արդարադատության նախարարություն՝ պետական գրանցման:
3. Հրամանի կատարումը հանձնարարել ՀՀ ՆԳ ն անձնագրային և վիզաների վարչությանը:

*Հաստատված է*  
*Հայաստանի Հանրապետության*  
*ՆԳ նախարարի 2000 թվականի*  
*27.09 թիվ 382 հրամանով*

**Կ Ա Ր Գ**

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՅՈՒԹՅԱՆ ՀԱՏՈՒԿ ԱՆՁՆԱԳԵՐԻ ՀԱՇՎԱՌՄԱՆ**

1. Հայաստանի Հանրապետությունում կացության հատուկ կարգավիճակ ստացած անձանց փաստաթղթավորելու նպատակով հաշվարկել ընթացիկ տարվա ծախսվելիք հատուկ անձնագրի բլանկների քանակը և յուրաքանչյուր տարվա հունվարի 5-ի դրությամբ ներկայացնել ՀՀ ՆԳ նախարարի հաստատմանը (նշելով բլանկների քանակը, համարը և սերիան):
2. Կացության հատուկ կարգավիճակի անձնագրերի համար հատկացվելիք բլանկների ողջ խմբաքանակը մուտքագրել անձնագրային բլանկների ծախսի ձև 2 մատյան (հավելված թիվ 1):
3. Հայաստանի Հանրապետությունում կացության հատուկ կարգավիճակ ստացած և Հայաստանի Հանրապետությունում գտնվող անձանց ձևակերպված հատուկ անձնագրերի հանձնումը կատարել ՀՀ ՆԳՆ անձնագրային և վիզաների վարչությունում՝ անձնագրի տիրոջ ներկայությամբ:
4. Հայաստանի Հանրապետությունում կացության հատուկ կարգավիճակ ստացած և օտարերկրյա պետություններում գտնվող անձանց ձևակերպված հատուկ անձնագրերի հանձնումը ՀՀ դիվանագիտական ներկայացուցչությունների և հյուպատոսական հիմնարկների կողմից ապահովելու համար, անձնագրերի առաքումը կատարել ՀՀ արտաքին գործերի նախարարության միջոցով, հատուկ փոստով:

**Հավելված թիվ 1**

**ՄԱՏՅԱՆԻ ԱՐՏԱՔԻՆ ՏԵՍՔԸ**

*Մատյան ձև 2*

**ԱՆՁՆԱԳՐԱՅԻՆ ԳՐՔՈՒՅՎՆԵՐԻ  
ՄՈՒՏՔԻ ԵՎ ԾԱԽՍԻ  
ՀԱՇՎԱՌՄԱՆ ՄԱՏՅԱՆ**

(ՆԳ մարմնի անվանումը)

Սկսված է \_\_\_\_\_

Ավարտված է \_\_\_\_\_

Էջերի քանակը \_\_\_\_\_  
 Պահպանման ժամկետը \_\_\_\_\_  
 Հիմք: Հրաման \_\_\_\_\_ հոդված \_\_\_\_\_

**ՄԱՏՅԱՆԻ ԷՋԻ ՏԵՄՔԸ**

Անձնագրի սերիան և համարը	Տրման ամսաթիվը	Ազգանուն, անուն, հայրանուն, ում են տրվել անձնագրերը	Նշումներ
ՄՈՒՏՔ		ԾԱԽՍ	
1	2	3	4